

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ



NEW GENERATION

ԱՄՓՈՓ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2019Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստան
Երևան 2020թ.

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԿ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
2019Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ



Սույն վերլուծությունը ստեղծվել է «Նոր Սերունդ»
Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Հեղինակ՝ Շուշան Խսկոյան
Խմբագիր՝ Սերգեյ Գաբրիելյան

Հայաստան, Երևան
2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Հապավումների ցանկ	4
2.	Ընդհանուր նկարագիր	5
3.	Վերլուծության մեթոդ	7
4.	Համագործակցությունը ՀՀ պետական կառույցների հետ	8
5.	Ձեռքբերումներ	29
6.	Խոչընդոտներ	31
7.	Եզրակացություն	33
8.	Առաջարկություններ	35

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱրՆ	Արդարադատության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵՀԿ	Երիտասարդական հասարակական կազմակերպություն
ՆՍՀԿ	«Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (այսուհետև՝ ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում: ՀԿ-ն իր գործունեությունը իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

ՆՍՀԿ շուրջ 20 տարի գործում է իրավապաշտպան ոլորտում և տրամադրում է անվճար իրավաբանական, հոգեբանական խորհրդատվություն, փաստաբանական ծառայություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվճար խորհրդատվություն, թեստավորում, կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ, հանրային միջոցառումներ, իրականացնում մարդասիրական և բարեգործական բազմաթիվ ծրագրեր:

ՆՍՀԿ իրավապաշտպան գործունեության կարևորագույն օղակներից է խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը (սոցիալապես անապահով անձինք, դատապարտյալներ, ՄԻԱՎ-ով ապրող անձինք, ԹՆՕ-ներ, LQPS+ անձինք և այլք):

ՆՍՀԿ-ն ունի տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների, դեսպանատների և անհատ բարերարների հետ համագործակցության բազմամյա փորձ:

Կազմակերպությունը փորձում է վերոնշյալ խնդիրների լուծումներն իրականացնել տարբեր համագործակցությունների ու աջակցությունների միջոցով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԸՀԿ) և նախաձեռնությունները առանցքային դեր են կատարում ժողովրդավարության, իրավունքի գերակայության ապահովման, որոշումների կայացման մակարդակում հասարակական տարբեր շերտերի շահերի ներկայացման գործընթացում, որոնք կարևորագույն նախապայմաններ են հասարակության կայուն զարգացման համար: Ուստի 2018թ.-ին Հայաստանում տեղի ունեցած իրավիճակային և կադրային փոփոխություններից հետո ՆՍՀԿ-ն բարձր գնահատելով նոր կառավարության մարդասիրական և կառուցողական դիրքորոշումը, մեծ ակնկալիքներ ուներ նոր կառավարության հետ համագործակցելու:

Ամփոփ վերլուծությամբ ներկայացնում ենք 2019թ. ընթացքում այլ շահագրգիռ կողմերի, մասնավորապես պետական հատվածի հետ ՆԱՅԿ-ի համագործակցության մակարդակն ու եղանակները, համագործակցության արդյունքում առկա ձեռքբերումներն ու խոչընդոտները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ

Սույն ուսումնասիրության մեթոդաբանությունն է ՆԱՅԿ ելքային գրությունների, դրանց գրավոր և բանավոր (հեռախոսազանգերի միջոցով) ստացված պատասխանների վերլուծությունը, ՆԱՅԿ դասընթացներին և միջոցառումներին մասնակցության հրավերների ընդունումների և մերժումների դուրս բերումը:

Ամբողջական պատկեր ստանալու համար կիրառվել են վերլուծության որակական և քանակական մեթոդներ:

Քանակական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել է 2019թ.-ի ընթացքում ՆԱՅԿ-ի կողմից պետական մարմիններին ուղարկված գրությունների և ստացված պատասխանների, մերժումների թվային տվյալները:


Որակական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել է 2019թ.-ի ընթացքում ՆԱՅԿ-ի կողմից պետական կառույցներին ուղարկված հրավերների պատասխանները, ստացված մերժումների հիմնավորումները:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

2018թ.-ին Հայաստանում տեղի ունեցած իրավիճակային և կադրային փոփոխություններից հետո ՆՍՀԿ-ն բարձր գնահատելով նոր կառավարության մարդասիրական և կառուցողական դիրքորոշումը, մեծ ակնկալիքներ ուներ նոր կառավարության հետ համագործակցելու:

Համագործակցությունը հիմնականում համատեղ քննարկումների, միջոցառումների, դասընթացների և այլ միջոցներով է իրականացվում:


Ստորև գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում պետական կառույցներին ուղարկված գրությունների և դրանց պատասխանների վերաբերյալ ընդհանուր թվային վիճակագրությունը:



Ստորև ներկայացվում է պետական կառույցների, մասնավորապես նախարարությունների, ՏԻՄ-երի, կառավարության հետ 2019թ.-ի ընթացքում համագործակցության ամփոփ վերլուծությունը ՆՍՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին, միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ: Անդրադարձ է կատարվելու այն գրություններին և համապատասխան պատասխաններին, որոնք մերժվել են պետական կառույցների կողմից:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետև նաև՝ ԿԳՄՍ) է ուղարկել թվով 5 գրություններ, որոնցից 4-ը եղել են դասընթացների, կլոր-սեղան քննարկումների հրավերներ: Կազմակերպված միջոցառումներից միայն մեկին է ԿԳՄՍ-ի կողմից մասնակցություն ապահովվել:

Այսպես, 2019թ.-ի հունվարի 24-ին, իր NG-02-017-1901 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով եռօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի փետրվարի 19-21-ը ՀՀ նախարարությունների ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 4 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրությանը 2019թ.-ի փետրվարի 4-ին ՆՍՀԿ-ն ստացել է ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ Արևիկ Անափիոսյանի 27/05.1/133419 գրությունը, որում մասնավորապես ասվում է. **«Ի պատասխան Ձեր 2018 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 31 գրության՝ ս.թ. փետրվարի 19-ից սեպտեմբերի 21-ը կայանալիք «Խտրականության**



արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով 3-օրյա դասընթացին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ ԽԱՐՈՎՅԱՆԻ անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Արմեն Կարեյանի և Երևանի պետական համալսարանի սոցիալագիայի ֆակուլտետի դասախոս Գագիկ Թումանյանի թեկնածությունները.:

Միաժամանակ հայտնում եմ, որ անհրաժեշտ է ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ներկայացնել միջոցառման օրակարգը և անցկացման վայրի վերաբերյալ մանրամասն տեղեկություն, որը ստանալուց և ուսումնասիրելուց հետո հնարավոր կլինի ներկայացնել նաև ԿԳ նախարարության ներկայացուցիչների թեկնածությունները»:

2019թ.-ի հուլիսի 11-ին NG-02-266-1907 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում ՀՀ պետաշխատողների համար նախատեսված «Խարանի և խտրականության արգելք» թեմայով մեկօրյա քննարկում-դասընթացին մասնակցելու համար խնդրել էր Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից 3 ներկայացուցչի մասնակցել քննարկմանը, որը տեղի էր ունենալու հուլիսի 25-ին: Այնուհետև 2019թ.-ի հուլիսի 17-ի NG-02-277-1907 գրությամբ նախորդ գրության մեջ վրիպակների ուղղում էր կատարել:


«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն վերոնշյալ գրությանը ոչ բանավոր և ոչ էլ գրավոր տարբերակներով պատասխան չի ստացել:

2019թ.-ի սեպտեմբերի 24-ին NG-02-366-1909 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում պետաշխատողների համար նախատեսված «MSMIT գործիքի կիրառումը» թեմայով մեկօրյա դասընթացին մասնակցելու համար խնդրել էր մեկ ներկայացուցչի մասնակցել, որը տեղի էր ունենալու հոկտեմբերի 11-ին: ՆՍՀԿ-ն գրությամբ կարևորել էր քննարկմանը նախարարության ներկայացուցիչների մասնակցությունը՝ **ՄԻԱԿ-ին առնչվող ծառայությունների հասանելիության առավել արդյունավետ ապահովման ու կազմակերպման նպատակով համագործակցության համատեքստում:**


Ի պատասխան ՆՍՀԿ NG-02-366-1909 գրության, հոկտեմբերի 16-ին ստացվել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լուսինե Առաքելյանի N02-07.1-23384-19 գրությունը, որով հայտնում են, որ «**MSMIT գործիքի կիրառումը**» թեմայով դասընթացին մասնակցելու համար թեկնածություն չեն առաջադրում:

ԱՌՈՂՋԱԿԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Առողջապահության նախարարություն (այսուհետև՝ ԱՆ) է ուղարկել թվով 25 գրություններ, որոնցից 8-ը դասընթացների և կյուր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել: Միջոցառումներից 4-ին է մասնակցություն ապահովվել ԱՆ-ի կողմից:



Այսպես, 2019թ.-ի հունվարի 23-ին, իր NG-02-015-1901 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով եռօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի փետրվարի 19-21-ը ՀՀ նախարարությունների ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 4 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրության, 01.02.2019թ.-ին ՀՀ առողջապահության նախարարի գլխավորի քարտուղարի տեղակալ Վահե Հակոբյանի NԿՀ/02.1/1092-19 գրությամբ նախարարության ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու նպատակով խնդրել էին դասընթացի անցկացման վայրի և օրակարգի մասին հավելյալ տեղեկատվություն:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ԱՆ-ին հայտնել էր անհրաժեշտ տեղեկատվությունը, սակայն ԱՆ-ից բանավոր կերպով հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել են, որ **չեն կարող մասնակցություն ասպահովել դասընթացին:**

2019թ.-ի հուլիսի 11-ին NG-02-269-1907 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի բուժաշխատողների շրջանում նախատեսված «Խարանի և խտրականության արգելք» թեմայով մեկօրյա քննարկում-դասընթացին մասնակցելու համար խնդրել էր Առողջապահության նախարարությունից 2 ներկայացուցչի մասնակցելու քննարկմանը, որը նախատեսված էր կազմակերպել 2019թ.-ի հուլիսի 24-ին:

Ի պատասխան ՆԱՀԿ գրությանը 2019թ.-ի հուլիսի 16-ին Առողջապահության նախարարության աշխատակից Աշխեն Վարդանյանի գրությամբ ներկայացվել էր նախարարությունից դասընթացին մասնակցող 2 անձանց տվյալները:

----- Forwarded message -----

From: Ashkhen Vardanyan <a.vardanyan@moh.am>

Date: Tue, Jul 16, 2019 at 9:45 AM

Subject: Ս.թ. հուլիսի 24-ին կազմակերպվելիք դասընթացների մասնակցության վերաբերյալ

To: <amirzoyan.ngngo@gmail.com>

Cc: > <l.khachatryan@moh.am>, <n.sergeeva@moh.am>, <sergeigabrielian@gmail.com>, <h.harutyunyan@moh.am>, <a.berezovskaya@moh.am>

Հարգելի գործընկեր,

2019թ.-ի հուլիսի 24-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպվելիք մեկօրյա քննարկում-դասընթացին Առողջապահության նախարարությունից կմասնակցեն ստորև նշված աշխատակիցները՝

Լիլիթ Խաչատրյան՝ l.khachatryan@moh.am , 060 808003 (2708)

Նաիրա Մերգեևա՝ n.sergeeva@moh.am , 060 808003 (2711):

Հարգանքներով՝

Աշխեն Վարդանյան:

Որոշ խնդիրների պատճառով դասընթացի օրը տեղափոխվել էր հուլիսի 26-ին: Օրվա փոփոխման հետ կապված ԱՆ համապատասխան գրություն է ուղարկվել:

Օրվա փոփոխության հետ կապված դասընթացի մասնակիցներից միայն մեկն էր նախապես տեղեկացրել էր, որ չի կարող մասնակցել դասընթացին, իսկ մյուս մասնակիցը չնայած մասնակցության հաստատմանը չէր մասնակցել:

2019թ.-ի սեպտեմբերի 3-ին NG-02-215-1906 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելման կարևորությունը, համագործակցության ուղիները և մարտահրավերները» կլոր-սեղան քննարկմանը մասնակցելու համար ՀՀ ԱՆ տեղակալ Լենա Նանուշյանին խնդրել էր մասնակցել, որը տեղի էր ունենալու սեպտեմբերի 27-ին:


ՆՍՀԿ-ն գրության պատասխանը ստացել է բանավոր կերպով հեռախոսազանգի միջոցով, որով հայտնել էին, որ հնարավորության դեպքում կմասնակցեն: Սակայն դասընթացի օր ՀՀ ԱՆ տեղակալ Լենա Նանուշյանը մասնակցություն չի ցուցաբերվել:

2019թ.-ի սեպտեմբերի 24-ին NG-02-363-1909 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում առողջապահության նախարարության կամ ենթակայության տակ գտնվող համապատասխան կառույցների ներկայացուցիչների համար նախատեսված «MSMIT գործիքի կիրառումը» թեմայով մեկօրյա դասընթացին մասնակցելու համար խնդրել էր երկու ներկայացուցիչ մասնակցել, որը տեղի էր ունենալու հոկտեմբերի 11-ին: ՆՍՀԿ-ն գրությամբ կարևորել էր քննարկմանը նախարարության ներկայացուցիչների մասնակցությունը՝ **ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության առավել արդյունավետ ապահովման ու կազմակերպման նպատակով համագործակցության համատեքստում:**

Ի պատասխան ՆՍՀԿ NG-02-363-1909 գրության նախարարությունից բանավոր կերպով հեռախոսազանգի միջոցով հայտնում են, որ **նախարարության համապատասխան մասնագետները արդեն այդ թեմայով ՆՍՀԿ-ի կողմից վերապատրաստում անցել են:**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում Արդարադատության նախարարություն (այսուհետև՝ ԱրՆ) ուղարկված գրությունների և դրանց պատասխանների վերաբերյալ քանակական վերլուծությունը:



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Արդարադատության նախարարություն (այսուհետև՝ ԱրՆ) է ուղարկել թվով 12 գրություններ, որոնցից 8-ը դասընթացների և կլոր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել: Հրավերներից ոչ մեկին ԱրՆ-ի կողմից մասնակցություն չի ցուցաբերվել:

Այսպես, 2019թ.-ի փետրվարի 6-ին, իր NG-02-018-1902 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Կարողությունների զարգացում և հզորացում» ծրագրի շրջանակներում 2019 թ.-ի մարտի 7-9-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 10 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆԱՀԿ գրությանը 2019թ.-ի փետրվարի 19-ին ստացվել է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ Հայկ Քոչինյանի Ե40/12-1080 գրությունը, որից մասնավորապես հայտնում են, որ **ելնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունից՝ քրեակատարողական**



ծառայողների մասնակցությունը դասընթացին նպատակահարմար չէ:

Հաշվի առնելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածությունը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2019թ.-ի փետրվարի 26-ի իր NG-02-023-1902 գրությամբ, խնդրել է իրեն հայտնել տարվա ընթացքում հավանական քիչ ծանրաբեռնված ժամանակահատվածները՝ դասընթացի կազմակերպման նպատակով:

2019թ.-ի մարտի 7-ին ի պատասխան ՆԱՀԿ գրության ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ Հայկ Քոչինյանի Ե40/12-1696 գրությամբ հայտնվում է, որ **քրեակատարողական ծառայությունում**


աշխատանքների ծանրաբեռնվածության սանդղակ չկա և քրեակատարողական հիմնարկներն աշխատում են 24 ժամյա ռեժիմով: Հետևաբար, նվազ

ծանրաբեռնվածությամբ աշխատելու հավանական ժամանակահատվածի վերաբերյալ հնարավոր չէ տրամադրել համապատասխան պարզաբանումներ:

2019թ.-ի մարտի 28-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կրկին ուղարկել է դասընթացի մասնակցության հրավեր՝ NG-02-070-1902, նշելով, որ գիտակցելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում է դասընթացի անցկացման համար ընտրել մասնակիցներին հարմար կամայական 3 օր՝ մայիս կամ հունիս ամիսներին:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը՝ ի դեմս պետի առաջին տեղակալ, արդարադատության գնդապետ Ս. Միքայելյանի, իր 2019թ.-ի ապրիլի 12-ի Ե40/10-2802 գրությամբ պատասխանել է.

«Հաշվի առնելով քրեակատարողական ծառայությունում առկա թափուր աշխատատեղերի քանակը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ քրեակատարողական ծառայության ծառայողները չեն կարող մասնակցել «Նոր Սերունդ» Մարդասիրական



ՅԿ-ի կողմից կազմակերպվող «Կարողությունների զարգացում և հզորացում մարդու իրավունքների և սեռականության ոլորտներում» թեմայով եռօրյա դասընթացին:

Բացի այդ, «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի համաձայն **յուրաքանչյուր տարի քրեակատարողական ծառայողները մասնակցում են վերապատրաստման դասընթացների»:**

2019թ.-ի ապրիլի 16-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ-ն իր NG-02-108-1904 գրությամբ «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կլոր-սեղան քննարկմանը մասնակցելու համար հրավիրել էր Արև Նախարար Արտակ Չեյնայանին : Կլոր-սեղան քննարկումը տեղի էր ունենալու մայիսի 17-ին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ-ն վերոնշյալ գրությանը ոչ բանավոր և ոչ էլ գրավոր տարբերակներով պատասխան չի ստացել:

2019թ.-ի մայիսի 14-ի NG-02-155-1905 գրությամբ խնդրել էինք տեղեկատվություն տրամադրել քրեակատարողական ծառայողների 2019թ.-ին վերապատրաստման դասընթացների թեմաների և մասնակիցների քանակի մասին:

Ի պատասխան մեր գրության 2019թ.-ի մայիսի 24-ին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ արդարադատության գնդապետ Մանուկ Միքայելյանի Ե40/10-3871 գրությամբ հայտնվում է, որ **քրեակատարողական ծառայողների վերապատրաստումն իրականացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:**

Քրեակատարողական ծառայության կողմից հասարակական կազմակերպությունների հետ փոխադարձ համագործակցության պատրաստակամության չունենալու մասին բազմիցս բարձրաձայնվել է տարբեր հարթակներում, սակայն ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հետ համագործակցությունը այդպես էլ չի ստացվում:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ նախագահ Սերգեյ Գաբրեիլյանը 2019թ.-ի մայիսի 21-ին «Մեղիա կենտրոնում» տեղի ունեցած քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի մամուլի ասուլիսի ժամանակ

բարձրացրել է այդ հարցը, նշելով, որ **ՀՀ Արդարադատության նախարարությունը** նոր **Կառավարության օրոք** արդյունավետ չի համագործակցում **ՀԿ-ների** հետ և չի մասնակցում նրանց կողմից կազմակերպվող մարդու իրավունքների և սեռականության վերաբերյալ դասընթացներին¹:

Ի պատասխան **Ս.Գաբրիելյանի** կողմից բարձրացրած հարցին, **ՀՀ քրեակատարողական ծառայության քաղաքականության մշակման բաժնի** պետ **Արփի Սարգսյանը** նշել է, որ նա չի հիշում որ **նախարարություն** գա հրավեր **նույնասեռականների** հետ կապված թեմայով քննարկումներին մասնակցելու հետ կապված: **Նաև** նշել է, որ



հետամուտ կլինի այդ հարցին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատապարտյալների հավասարության ապահովումը **նախարարության** դիտակետում է գտնվում և գործնականում **նախարարությունը** ձեռնարկում է և պատրաստ է ձեռնարկել և շարունակել ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կկարողանան օժանդակել, աջակցել, որպեսզի գործնականում չունենանք դատապարտյալների անհավասարության դեպքեր և գոնե գնալով **նվազագույնի** հասցնել, որ հետո չունենանք **նման դեպքեր**²:

2019թ.-ի մայիսի 22-ի NG-02-160-1905 ԱՆ ուղղված գրությամբ **ՆՍՀԿ-ն** ներկայացրել էր մինչ այդ հրավերների և ստացված պատասխանների պատկերը:

2019թ.-ի հունիսի 6-ին **ՀՀ Արդարադատության նախարարության** գլխավոր քարտուղարի տեղակալ **Նարեկ Ղազարյանի** No 07/12.0/01/12169-19 **ՆՍՀԿ-ին** ուղղված գրությամբ հայտնում են, որ **ՀՀ Արդարադատության նախարարությունը** չի ստացել **նույնասեռականների** հետ կապված **քննարկումներին մասնակցելու որևէ հրավեր**:

Հաշվի առնելով վերոգրյալները, ինչպես նաև քրեակատարողական ծառայությունում առկա թափուր աշխատատեղերի քանակը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հաջորդ գրությունը՝ NG-02-268-1907, ուղարկել է 2019թ.-ի հուլիսի 11-ին, պետաշխատողների համար **նախատեսված «Խարանի և խտրականության արգելք»** թեմայով դասընթացին մասնակցելու համար խնդրելով 2 ներկայացուցչի մասնակցություն, որը

¹ <https://www.youtube.com/watch?v=CHRgaUwaAY4&t=592s>

² <https://www.youtube.com/watch?v=CHRgaUwaAY4&t=592s>

Նախատեսվում է իրականացել հուլիսի 24-ին: Այնուհետև NG-02-279-1907 գրությամբ դասընթացի օրվա փոփոխության և վրիպակի մասին հավելյալ տեղեկացրել էր:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն վերոնշյալ գրությանը ոչ բանավոր և ոչ էլ գրավոր տարբերակներով պատասխան չի ստացել:

Այնուհետև ՆԱՀԿ-ն օգոստոս ամսին ուղարկված NG-02-315-1908 գրությամբ ինդրել է նշել առավել հարմար ժամանակահատված դասընթացի իրականացման համար:

Ի պատասխան ՆԱՀԿ գրությանը 2019թ.-ի օգոստոսի 23-ին ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ, արդարադատության գնդապետ Հ. Նավասարդյանի Ե40/12-1696 գրությամբ հայտնում են, որ **հաշվի առնելով ծառայության աշխատանքային աշխատանքային ծանրաբեռնվածությունը և թափուր հաստիքային միավորների քանակը՝ քրեակատարողական ծառայությունը չի կարող ներկայացրել որևէ «Կարողությունների զարգացում և հզորացում մատչելի կապիտալի և սեռականության ոլորտներում» թեմայով դասընթացին մասնակցելու համար:**



2019թ.-ի հոկտեմբերի 25-ին Արդարադատության նախարարության և Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության կազմակերպած «Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. Գործողությունների ծրագրի» նախագծի շուրջ ոլորտային քննարկումների ժամանակ մեր կողմից կրկին բարձրաձայնվեց քրեակատարողական ծառայության հետ համագործակցության ոչ պատրաստակամության մասին՝ այն, որ չեն մասնակցում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին: ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը ի պատասխան նշեց, որ կարևորում է Հասարակական

կազմակերպությունների հետ համագործակցությունը և այն միանշանակ պետք է լինի:

2019թ.-ի հոկտեմբերի 30-ին իր NG-02-402-1910 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն համագործակցության պատկերը ներկայացնում է Արևին և կրկին հրավիրում «Կարողությունների զարգացում և հզորացում» ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք դասընթացին: Գրությամբ ՆԱՀԿ խնդրել էր հայտնել իրենց հարմար օրերը դասընթացի անցկացման համար:




Ի պատասխան ՆԱՀԿ գրության, 2019թ.-ի նոյեմբերի 15-ին ՀՀ Արև գլխավոր քարտուղարի տեղակալ Նարեկ Ղազարյանի N12.002/25696-19 գրությամբ հայտնում են, որ

«...ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողները վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների են մասնակցում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրի իրականացման նկատմամբ» ՊՈԱԿ-ի ուսումնական կենտրոնում: Այդ իսկ պատճառով վերջինների մասնակցությունը «Կարողությունների զարգացում և հզորացում» մարտի խաղաղության կարգադրության և խորհրդանշանների կանոնադրման դրամատիկ քննարկի մեթոդով դասընթացի ներկայացմանը և նպաստավոր է:

վերջիններիս մասնակցությունը «Կարողությունների զարգացում և հզորացում» մարդու իրավունքների պաշտպանության, խարանի, խտրականության և խոշտանգումների կանխարգելման ոլորտներում թեմայով դասընթացին ներկայումս նպատակահարմար չէ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետև՝ ԱՍՀՆ) է ուղարկել թվով 8 գրություններ, որոնցից 5-ը դասընթացների և կլոր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել: Հրավերներից միայն 1-ին են մասնակցություն ցուցաբերել:

2019թ.-ի ապրիլի 16-ին NG-02-109-1904 գրությամբ ՆԱՀԿ-ն «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կլոր-սեղան քննարկմանը մասնակցելու համար հրավեր էր ուղարկել նախարարին, որը տեղի էր ունենալու մայիսի 17-ին:

ՆԱՀԿ գրությանը պատասխան ստացվել է բանավոր կերպով՝ հեռախոսազանգի միջոցով, հաստատել են մասնակցություն, սակայն միջացառումից թուղներ առաջ տեղեկացրել են, որ չեն կարող մասնակցել:

2019թ.-ի հուլիսի 11-ին NG-02-264-1907 գրությամբ ՆԱՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի բուժաշխատողների շրջանում նախատեսված «Խարանի և խտրականության արգելք» թեմայով մեկօրյա քննարկում-դասընթացին մասնակցելու համար խնդրել էր Առողջապահության

Նախարարությունից 2 ներկայացուցչի մասնակցելու քննարկմանը, որը նախատեսված էր կազմակերպել 2019թ.-ի հուլիսի 24-ին: Այնուհետև 2019թ.-ի հուլիսի 17-ի NG-02-276-1907 գրությամբ նախորդ գրության մեջ վրիպակների ուղղում էր կատարել:


ՆՍՀԿ գրությանը պատասխան չի ստացվել:

2019թ. -ի սեպտեմբերի 24-ին NG-02-362-1909 գրությամբ ՆՍՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 11-ին տեղի ունենալիք «MSMIT գործիքի կիրառումը» թեմայով դասընթացին մասնակցելու համար խնդրել էր մեկ ներկայացուցչի մասնակցել դասընթացին: ՆՍՀԿ-ն գրությամբ մասնավորապես նշել էր, որ շատ է կարևորում մասնակցությունը տվյալ քննարկմանը՝ ՄԻԱԿ-ին առնչվող ծառայությունների հասանելիության առավել արդյունավետ ապահովման ու կազմակերպման նպատակով համագործակցության կոնստրուկտիվ:

ՆՍՀԿ գրությանը պատասխան չի ստացվել:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Պաշտպանության նախարարություն (այսուհետև՝ ՊՆ) է ուղարկել թվով 6 գրություններ, որոնցից 3-ը դասընթացների և կլոր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել: Հրավերներից ոչ մեկին մասնակցություն չեն ցուցաբերել:

Այսպես, 2019թ.-ի հունվարի 24-ին, իր NG-02-017-1901 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով եռօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի փետրվարի 19-21-ը ՀՀ նախարարությունների ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 4 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրությանը 2019թ.-ի փետրվարի 4-ին ՆՍՀԿ-ն ստացել է ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար, քիժ 1-ին դասի պետական խորհրդական Գ.Հայրապետյանի ՊՆ-510-Ա2-89 գրությունը, որով տեղեկանում ենք, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով չեն կարող մասնակցել դասընթացին:



Այսպես, 2019թ.-ի մայիսի 2-ին, իր NG-02-147-1905 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կլոր-սեղան քննարկմանը մասնակցելու համար հրավեր էր ուղարկել նախարար Դավիթ Տոնյանին:

ՆՍՀԿ գրությանը պատասխան չի ստացվել:

2019թ.-ի հուլիսի 11-ին, իր NG-02-265-1907 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով մեկօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի հուլիսի 24-ին Երևան քաղաքի բուժաշխատողների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 2 ներկայացուցիչ:

ՀՀ ՊՆ-ից հեռախոսազանգի միջոցով փորձել են մանրամասներ ճշտել դասընթացի վերաբերյալ: ՆՍՀԿ համապատասխան աշխատակցի կողմից տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվությունը:


26.07.2019թ.-ին ՊՆ գլխավոր քարտուղար Գ.Հայրապետյանի ՊՆ/510 ԱՂ-754 գրությամբ տեղեկանում ենք, որ գինված ուժերի ներկայացուցիչների մասնակցությունը գտնվել է ոչ նպատակահարմար:



Այնուհետև, հուլիսի 26-ի NG-02-300-1907 գրությամբ ՆՍՀԿ-ն տրամադրել է պարզաբանել է, որ համապատասխան աշխատակիցը մանրամասն տեղեկատվություն է տրամադրել դասընթացի հետ կապված և, նախարարությունը խուսափողական վարքագիծ է դրսևորում ՔՀԿ-ների հետ համագործակցելու հարցում:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետև՝ ՏԿԵՆ) է ուղարկել թվով 2 գրություններ, որոնք դասընթացների և կլոր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել: Հրավերներից ոչ մեկին մասնակցություն չեն ցուցաբերել:

Այսպես, 2019թ.-ի հունվարի 23-ին, իր NG-02-016-1901 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով եռօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի փետրվարի 19-21-ը ՀՀ նախարարությունների ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 4 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրությանը 2019թ.-ի փետրվարի 1-ին ՆՍՀԿ-ն ստացել է ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղեկալ Կարեն Իսախանյանի N04/15.1/811-19 գրությունը, որով տեղեկանում ենք, որ նախարարության աշխատանքների ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով դասընթացի մասնակցության հարցը


հնարավոր կլինի քննարկել միջոցառման նախօրեին: Սակայն նախարարություն մասնակցությունն այդպես էլ չեն ցուցաբերել:

2019թ.-ի մայիսի 2-ին, իր NG-02-110-1904 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կլոր-սեղան քննարկմանը, որը տեղի էր ունենալու 2019թ.-ի մայիսի 17-ին, մասնակցելու համար հրավեր էր ուղարկել նախարար Սուրեն Պապիկյանին:

ԼՍՀԿ գրությանը պատասխան չի ստացվել:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Տեղական ինքնակառավարման մարմիններին(այսուհետ նաև՝ ՏԻՄ)՝ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին է ուղարկել թվով 22 գրություններ, որոնցից 15-ը դասընթացների և կլոր-սեղան քննարկումներ մասնակցության հրավերներ են եղել:

Այսպես, 2019թ.-ի հունվարի 23-ին, իր NG-02-001-1901, NG-02-002-1901, NG-02-003-1901, NG-02-004-1901, NG-02-005-1901, NG-02-006-1901, NG-02-007-1901, NG-02-008-1901, NG-02-009-1901, NG-02-010-1901, NG-02-011-1901 գրություններով

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով եռօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի փետրվարի 19-21-ը նախատեսված դասընթացին մասնակցության համար համապատասխանաբար Արագածոտնի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից խնդրել է տրամադրել 1-ական ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրության, դասընթացների մասնակցության համար ներկայացուցիչներ էին տրամադրել միայն Լոռու, Տավուշի մարզպետարաններից: Շիրակի և Վայոց Ձորի մարզպետարաններից ՆՍՀԿ գրությանը պատասխան չի ստացվել: Իսկ մյուս մարմինները հրաժարվել էին մասնակցել պատճառաբանելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

2019թ.-ի ապրիլի 16-ին, իր NG-02-111-1904 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կլոր-սեղան քննարկմանը, որը տեղի էր ունենալու 2019թ.-ի մայիսի 17-ին, մասնակցելու համար հրավեր էր ուղարկել Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին:

ՆՍՀԿ-ն գրությանը պատասխան չի ստացել:

2019թ.-ի հուլիսի 11-ին, իր NG-02-270-1907 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով մեկօրյա դասընթացի շրջանակներում 2019թ.-ի հուլիսի 24-ին Երևան քաղաքի բուժաշխատողների համար նախատեսված դասընթացին մասնակցության համար խնդրել է տրամադրել 2 ներկայացուցիչ:

Ի պատասխան ՆՍՀԿ գրության Երևանի քաղաքապետարանի առողջության վարչության պետ Կ.Բաբինյանի N10/65252h գրությամբ հայտնում են մասնակից Անահիտ Չարիսիֆալաքյանի մասնակցությունը: Վերջինս հաստատում է դասընթացին իր մասնակցությունը, սակայն դասընթացի օրը չի մասնակցում:

Պետաշխատողների համար նախատեսված «Խտրականության արգելք հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով մեկօրյա դասընթացին, որը տեղի էր ունենալու 2019թ.-ի հուլիսի 25-ին, մասնակցելու համար 2019թ.-ի հուլիսի 17-ին, իր NG-02-280-1907 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Երևանի քաղաքապետին ուղղված գրությամբ խնդրել էր 2 ներկայացուցչի մասնակցությունն ապահովել:


ՆՍՅԿ-ն գրությանը պատասխան չի ստացել:

2019թ.-ի սեպտեմբերի 24-ին NG-02-361-1909 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում պետաշխատողների համար նախատեսված «MSMIT գործիքի կիրառումը» թեմայով մեկօրյա դասընթացին մասնակցելու համար խնդրել էր երկու ներկայացուցչի մասնակցել, որը տեղի էր ունենալու հոկտեմբերի 11-ին:

Ի պատասխան ՆՍՅԿ գրության Երևանի քաղաքապետարանից հայտնել էին, որ զբաղվածության պատճառով չեն կարող մասնակցել:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գծապատկերով ներկայացվում է 2019թ.-ի ընթացքում ուղարկված գրությունների և ստացված պատասխանների քանակական վերլուծությունը.



2019թ.-ի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ՀՀ կառավարությանը և Ոստիկանությանն է ուղարկել թվով 20 գրություններ, որոնցից 6-ը դասընթացների և կյոբ-սեղան քննարկումների մասնակցության հրավերներ են եղել:

Այսպես, 2019թ.-ի ապրիլի 12-ին NG-02-096-1904 ոստիկանապետին ուղղված գրությամբ ՆՍՅԿ-ն խնդրել էր ոստիկանության 10 ներկայացուցչի մասնակցելու նախատեսված «Կարողությունների զարգացում և հզորացում մարդու իրավունքների և սեռականության ոլորտներում» թեմայով եռօրյա դասընթացին և նշված օրերի անհարմարության դեպքում առաջարկել էր ընտրել այլ օրեր:

Սակայն գրությանը ՆՍՅԿ-ն ոչ մի պատասխան չի ստացել:

2019թ.-ի ապրիլի 16-ին, իր NG-02-105-1904 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման և առողջության պահպանման համատեքստում» կյոր-սեղան քննարկմանը, որը տեղի էր ունենալու 2019թ.-ի մայիսի 17-ին, մասնակցելու համար հրավեր էր ուղարկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Կյոր-սեղան քննարկմանը մասնակցելու հրավեր էի ուղարկվել նաև ՀՀ ոստիկանապետ Վալերիեյ Օսիպյանին:

Գրություններին ոչ բանավոր, ոչ էլ գրավոր կերպով պատասխան չի ստացվել:

2019թ.-ի սեպտեմբերի 3-ին NG-02-213-1906 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելման կարևորությունը, համագործակցության ուղիները և մարտահրավերները» կյոր-սեղան քննարկմանը մասնակցելու համար ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանին խնդրել էր մասնակցել, որը տեղի էր ունենալու սեպտեմբերի 27-ին:

Գրությանը ոչ բանավոր, ոչ էլ գրավոր կերպով պատասխան չի ստացվել:

Ձեռքբերումներ

2019թ.-ի ընթացքում պետական կառույցների հետ համագործակցության արդյունքում մի շարք ձեռքբերումներ եղան:

ՆԱՅԿ-ն տարբեր նախագծերի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացրել ՀՀ ԱՆՅՆ, Ֆինանսների նախարարությանը, ԱՆ և այլ մարմիններին, որոնք ընդունվել են^{3, 4}:

Պետական կառույցների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել են մի շարք դասընթացներ ՀՀ պետաշխատողների և բուժաշխատողների շրջանում, բարձրացնելով իրազեկվածության մակարդակը^{5,6,7}:

2019թ.-ի երկրորդ կիսամյակում առաջին անգամ համագործակցությունն ձեռք բերվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հետ և այնտեղ անցկացվեցին մի քանի դասընթացներ Մարդու իրավունքների հիմնախնդիրները ՀՀ-ում: Եվրոպայի խորհուրդը և մարդու իրավունքների պաշտպանությունը», «Խարան, խտրականություն, խոշտանգում», «Մարդու իրավունքներ, հավաքների ազատություն», «Միջազգային իրավունք, մարդու իրավունքների միջազգային պաշտպանության մեխանիզմները» թեմաներով⁸:

Արդյունավետ համագործակցություն է եղել նաև Երևանի քաղաքապետարանի և Արտաքին գործերի նախարարության(այսուհետ նաև՝ ԱԳՆ) հետ: ՆԱՅԿ-ԱԳՆ-Երևանի քաղաքապետարան համագործակցության արդյունքում կազմակերպվել է ՀՀ քաղաքացու Վրաստանից Հայաստան տեղափոխությունը և Երևան քաղաքում առաջին բուժօգնության տրամադրումը, այնուհետև Երևանից Սյունիքի մարզ Շտապօգնության մեքենայով տեղափոխությունը⁹:

ՆԱՅԿ-ի կողմից կազմակերպվել են մի շարք դասընթացներ, որոնց Երևանի քաղաքապետարանի կողմից մասնակցությունը տվյալ պահին անհնարին է եղել,

³ https://ngngo.net/hy/news/fin_apr_ngngo_2020/218

⁴ https://ngngo.net/hy/news/statement_HIV/134

⁵ <https://ngngo.net/hy/news/THREE-DAY-TRAINING/125>

⁶ <https://ngngo.net/hy/news/training-on-prevention-of-stigma-and-discrimination/173>

⁷ <https://new.ngngo.net/application/post/61>

⁸ https://ngngo.net/hy/news/%20POLICE_training/202

⁹ <https://ngngo.net/hy/news/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A5%D6%80/127>

սակայն այնուամենայնիվ գրություններին հետագայում կրկին անդրադարձ եղել է և ապահովվել են մասնակցություն:

ՀՀ ՊՆ-ի հետ համագործակցության արդյունքում ՆՍՀԿ շահառուն կրկնակի հետազոտություն է անցել, որի արդյունքում ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

ՆՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներից 2-ի ժամանակ ՀՀ ոստիկանության հետ համագործակցության արդյունքում նրանց կողմից բարձր մակարդակով կազմակերպվել են ՆՍՀԿ աշխատակազմի և միջացառումների հյուրերի անվտանգության ապահովումը:

ՆՍՀԿ-ն վարչական դատարանում շահել ոստիկանության դեմ 2 գործ՝ ՆՍՀԿ գրություններին չպատասխանելու մասով^{10,11}:

2019թ.-ին ՆՍՀԿ-ն հաղթեց «ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում», «ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» և «ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» դրամաշնորհային ծրագրերը, որոնք հայտարարվել էին ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից, որը իրականացվում է ՀՀ ԱՆ-ի կողմից Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին: Ծրագիրը պետք է իրականացվի 2019-2021թթ. ընթացքում (ընդհանուր 29 ամիս տևողությամբ) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:

¹⁰ <https://ngngo.net/hy/news/this-article-is-available-only-in-armenian/166>

¹¹ <https://new.ngngo.net/application/post/60>

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

2019թ.-ի ընթացքում ՆՍՀԿ-ն բազմաթիվ գրություններ է ուղղել պետական կառավարման մարմիններին, որոնից շատերին այդպես էլ պատասխաններ չեն ստացվել, կամ պատասխանել են ուշ, որով խախտվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Որոշ դեպքերում ՆՍՀԿ-ն ստիպված է եղել կրկնակի գրություններ ուղարկել տեղեկատվության ստացման համար:

ՆՍՀԿ 2019թ.-ի ընթացքում փորձել է համագործակցություն հաստատել Արդարադատության նախարարության հետ, որին փոխադարձ արձագանք չի եղել:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ներկայացուցիչներն ընդգրկված են ՀՀ ԱՆ ԶԿՀ-ներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբում: Խմբում ներգրավվածության տարիների փորձը ցույց է տվել, որ ԶԿՀ-ներում ԼԳԲՏ անձինք ունեն խոցելի կարգավիճակ, թե՛ պահման պայմանների, թե՛ վարչակազմի ու դատապարտյալների հետ փոխհարաբերությունների առումով:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն 2016թ.-ի նոյեմբերի 23-24-ին, 59-րդ նստաշրջանում Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում հայտնել է իր մտահոգությունը, կապված ՀՀ ԱՆ ԶԿՀ-ներում դատապարտյալների միջև բռնության, քրեական ենթամշակույթի առկայության, ԶԿՀ վարչակազմի անբավարարության, քրոնիկ բնույթ ստացած խտրականության, ատելության խոսքի, նույնասեռական անձանց պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, նշված դեպքերի պաշտոնական վիճակագրություն չունենալու առնչությամբ և նշել, որ **անհրաժեշտ է անցկացնել վերապատրաստումներ ԶԿՀ աշխատակիցների համար՝ դատապարտյալների և վարչակազմի միջև ադեկվատ փոխհարաբերությունների, քրեական ենթամշակույթի վերացման, նույնասեռական ազատագրվածների նկատմամբ խտրականությանն և բռնությանը վերջ դնելու և բոլոր տեսակի վիրավորող ու նվաստացնող պրակտիկաները վերացնելու նպատակով:**

Նման իրավիճակում խնդրի լուծումը բազմակողմանի տեղեկատվության ստացման և իրազեկվածության մակարդակի բարձրացման մեջ է: Հաշվի առնելով վերը նշված խնդիրները Կազմակերպության կողմից կազմակերպվել են բազմաթիվ դասընթացներ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչների համար:

Սակայն համագործակցությունը այդպես էլ չի ստացվել: ԱՆ-ի կողմից պարբերաբար մերժումներ է ստացվել համագործակցության համար:

Ինչպես արդեն վերլուծությունից պարզ է դառնում 2019թ.-ի ընթացքում կազմակերպված դասընթաց-միջոցառումների մասնակցության հրավերներից շատերին պետական կառույցների կողմից այդպես էլ արձագանքներ չեն ստացվել, նաև շատ են եղել այն դեպքերը, երբ նրանց կողմից հաստատվել են մասնակցությունը, սակայն վերջիններս չեն ապահովվել մասնակցություն:

2019թ.-ին համացանցը հեղեղված էր խտրականության և ատելության կոչերով, սպառնալիքներով, զրպարտություններով: ՆՍՀԿ մի շարք միջոցառումների վերաբերյալ որոշ օգտատերեր կեղծ տեղեկատվություն էին շրջանառել համացանցում, որով կրկին ատելության ալիք էին բարձրացրել հասարակության մեջ^{12,13}....

¹² <https://aatozz.livejournal.com/745.html?fbclid=IwAR3pkUVEzqAZyzpfM3R5kn8pZu3h4TIDSoWCGAFORw479-U1WPm3LfLfew>

¹³ <https://press.spektr.am/?p=6700>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծության պատկերը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների կողմից գրություններին մեծամասամբ կամ չեն տրամադրվում պատասխաններ, կամ պատասխանում են բավականին ուշ: Մինչդեռ ՀՀ-ում գործում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենք, որով սահմանվում են գրություններին պատասխանելու ժամկետների հարցը:

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն, **եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:** Նույն հոդվածի 7-րդ մասի երկրորդ կետի համաձայն, **եթե գրավոր դիմումում նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:** Նույն հոդվածի 7-րդ մասի երրորդ կետի համաձայն, **եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝** նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, **եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ** հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

ՆԱՀԿ-ն որոշ դեպքերում ստիպված է եղել դատական կարգով պահանջել գրություններին պատասխանել:

Կառավարությունը և նրա ենթակա մարմինների համար ՆԱՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին, միջոցառումներին չմասնակցելով, կամ

մասնակությունը հաստատելով բայց կրկին չմասնակցելով, ինչպես նաև գրություններին չպատասխանելով կամ պատասխանելով օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ դրսևորվել է խուսափողական վարքագիծ համագործակցության հարցում:

ՔԿՅ-ներում առկա խարանի և խտրականության վերացմանը նպաստելու համար ՆՍՀԿ-ի կողմից կազմակերպվել են բազմաթիվ դասընթացներ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչների համար: Սակայն համագործակցությունը այդպես էլ չի ստացվել: ԱՆ-ի կողմից պարբերաբար մերժումներ է ստացվել համագործակցության համար: ԱՆ ներկայացուցիչները տարբեր հարթակներում ներկայացնում են թե ՀԿ-ների հետ արդյունավետ համագործակցում են: Սակայն ինչպես վերլուծությունից պարզ է դառնում նրանց կողմից պատրաստակամություն չի դրսևորվել համագործակցության:

Կառավարությունը և նրա ենթակա մարմինները բավարար պատրաստակամություն չեն ցուցաբերել համագործակցելու հանուն ժողովրդավարության արժեքների ներդրմանը, այն է մարդու իրավունքների պաշտպանությանը և խարանի ու խտրականության վերացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետամուտ լինել պետական և այլ մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ապահովելու գործընթացին,

Համագործակցության և երկխոսության հաստատման համար նպաստավոր դաշտ ստեղծել կառավարության և ԸՀԿ-ների միջև,

Հստակեցնել ԸՀԿ-ների հետ նախարարությունների աշխատանքն ու համագործակցությունը համապատասխան իրավական կարգավորումներով և օրենսդրական նորմերով,

ԸՀԿ-ների և պետության միջև համագործակցությունը զարգացնել սոցիալական գործընկերության մեխանիզմների ձևավորման և այդ ավանդույթի ներդրման միջոցով,

Մշակել պետության և ԸՀԿ-ների համագործակցության միասնական հայեցակարգ:

ՆՈՐ ԱԵՐՈՒՆԴ  **NEW GENERATION**

 **ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** **HUMANITARIAN NON-GOVERNMENTAL ORGANIZATION**

 **ՀՀ, 0001 Երևան, Թումանյան 10, բն. 7** **+374 60 378989**
RA, 0001 Yerevan, Apt. 7, 10 Tumanyan str. +374 60 478989

 **+374 60 378989**

 **NewGenerationNGO@gmail.com**

 **https://ngngo.net**

 **New Generation Humanitarian NGO**

 **@NGNGDArmenia**

 **ngngo.armenia**